

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ընտրողական սկզբունքի ընդարձակում.— Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Առիւթա-
ղից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիս-
ից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լու-
րեր.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խաղաղարարու-
թեան գործը:

ԸՆՏՐՈՒԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

Կառավարութիւնը մտադիր է ընդար-
ձակել քաղաքային ընտրողների շրջանը:
Մինչև այժմ այդ շրջանը սահմանափակ-
ված էր. միայն անշարժ կալուածք ունե-
ցողները և առևտրական մեծ տներն էին
օգտվում ընտրողական իրաւունքից, իսկ
քաղաքի միւս ազգայնականութիւնը ոչ մի
ներկայացուցչութիւն չուներ քաղաքային
խորհրդարանում, այդ պատճառով և քա-
ղաքի բարեկարգութեան գործը կենտրո-
նանում էր քաղաքի բնակիչների միայն
մի մասի մէջ: Կառավարութիւնը այժմ
մտադիր է թողնու, որ բնակիչների
մի մասը նոյնպէս մասնակցէ ընտրութիւն-
ներին:

Եթէ չեն մոռացել մեր ընթերցողները,
երկու տարի օրանից առաջ կառավարու-
թիւնը որոշել էր մտցնել բնակարա-
նային հարկ քաղաքներում, սահմանելով
բնակարան վարձողների համար պետական
տուրք համապատասխան բնակարանների
համար տրված վարձին: Նախ քան հարկը
մտցնելը, կառավարութիւնը տեղեկութիւն-
ներ ժողովեց, թէ որքան գումար կը
կազմէին վերջի վերջոյ այդ նոր տուրքից
պետական գանձարանը մտցնելու համար:
Քննութիւնը և հաշիւը ցոյց տուին, որ
այդ նոր տուրքի համազումը պետական
գանձարանի համար աննշան մի թիւ է և
որ այդպիսի փոքր արդիւնքի համար չար-
ժէ տեղեկել յատուկ ատենաներ և պահել
պաշտօնական մի ընդարձակ խումբ: Կառա-
վարութիւնը որոշեց հրաժարվել այդ նոր
հարկից, բայց թողնու, որ քաղաքները
իրանք մտցնեն այդ հարկը իրանց պէտքե-
րի համար այն պայմանով, որ յայտնի
գումարի բնակարան վարձողները ունենան
ընտրողական իրաւունքներ: Այդ
գումարը մայրաքաղաքների և մեծ քաղաք-

ների համար որոշված է 900 ռուբլի, իսկ
միւս քաղաքների համար աւելի փոքր:

Ընտրողների շրջանի այդ ընդարձակումը
գեւե չէ կարող ընտրողական ընդհանրութեան
մօտեցնել քաղաքի ազգայնականութեան բո-
լոր մասերը, բայց նա արդէն մի նշանաւոր
քայլ է դնել առաջ: Ինտերիւզներ մարդ-
կանց մի մեծ խումբ այդպիսով կարողու-
թիւն է ստանում մասնակցել քաղաքային
ընտրութիւններին: Բժիշկներ, իրաւաբան-
ներ, գանազան պետական և հասարակա-
կան հիմնարկութիւնների մէջ գործող պաշտօ-
նականներ, որոնք այժմ յաճախ, ցեղ չունենա-
լու պատճառով, անմասն են քաղաքի գոր-
ծերի մէջ, այժմ ընդունակ կը դառնան
ազդել քաղաքի բարեկարգութեան խնդր-
ների մշակութեան և լուծման վրա: Նոյն
իսկ աւելի քիչ պատրաստութիւն ունեցող
անձինք, ունենալով բոլորովին ուրիշ շա-
հեր, քան անշարժ կալուածք ունեցողնե-
րը, կը մտցնեն քաղաքի բարեկարգութեան
հարցերի մէջ աւելի լայն հայեացք, որով-
հետեւ բնակարաններ ունեցողների համար
քաղաքի կեանքի յարմարութիւնները աւե-
լի զգալի են և շօշափելի:

Մտցնելով այդ նոր հարկը, ցանկալի է
սակայն թեթևացնել նրա ծանրութիւնը
ազգայնականութեան այն դասակարգերի հա-
մար, որոնք աղքատ են և ընտրողական ի-
րաւունքից զրկված: Ուրախութեամբ կա-
րելի է տանել յայտնի ծանրութիւն և
օգտվել որոշ իրաւունքից. բայց երբ իրա-
ւունքը սահմանափակված է, այն ժամա-
նակ արտօնեալների վրա բարոյական
պարտք կայ թեթևացնել այն մարդկանց
ծանրութիւնը, որոնք անապահով վիճակի
մէջ են և հազիւ հազ հայթայթում են
իրանց ապրուստը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ռուսաց զբաղմունքի համար մի առան-
ձին բաղդ է, որ մինչև այժմ կենդանի է յի-
ստանական թակալանքի զբաղմունքի
մէջ: Իսկ կոմս Լեօ Տոլստոյն է: Ամեն առիթով,
երբ հռչակաւոր ծերունին լոյս է հանում իր
գրական նոր վատարկութիւնը մէջը, ամբողջ քա-
ղաքակրթութեան սկզբում է մի վերին առ-
տիմանի հետաքրքրական իրարանցում. ամեն
տեղ, կատարելապէս ամեն տեղ, ուր գործում է

ուղղորակման մեքենան, Տոլստոյն, իր նոր եր-
կով դառնում է ընտրութիւնների, վիճարանու-
թիւնների, ամբողջ փիլիսոփայական տրակտատ-
ների առարկայ: Բոսում է լրագիրը, խօսում է
պրոֆէսորը, ուսուցիչը. խօսում է և եկեղեցու
պաշտօնեան: Եւ որ ամենից զարմանալին է,
այդ վեճերի ու դատողութիւնների մէջ խառն-
վում է հիւզումները ծայրայեղ դժգոհութեան
հետ, օրհնանքը անէճեր հետ: Կարելի է առանց
հափաղանքութեան ասել, որ Լեօ Տոլստոյն ներ-
կայումս պատկերացնում է այն վիժակարի ոյժը,
որին գրչը կարող է հասնել միայն շատ հազ-
ադիւտ, բացառիկ դէպքերում. այն ոյժը, որ
խուլ գիւղական անկիւնից անգամ կայծակի ա-
րագոյթեամբ տարածվում է ամեն տեղ և խօ-
սեցնել է տալիս ամբողջ աշխարհը: Մի այդպի-
սի երկայն տեղի ունի և այժմ «Нива» շաբա-
թաթերթի մէջ սկսվել է Տոլստոյի «Воскресенье»
(«Յարութիւն») վեպի տպագրութիւնը: Գեո-
ղորդու է տպագրվել, դեռ ամբողջ գործը
յայտնի կը դառնայ ընթերցողներին միայն
սեպտեմբեր ամսին, երբ կը վերջանայ վեպի
մասնա-մաս հրատարակութիւնը. բայց այժմից իսկ
սկսվել է եռանդուն շարժում բոլոր երկրների
լրագրութեան մէջ: Ռուսաստանում շատ լրա-
գիրներ շտապեցին տալ հրատարակված գրու-
թիւնների բովանդակութիւնը, շատերն էլ սկսել են
պարզապէս արտատպել: Միաժամանակ վեպի
թարգմանութիւնը լոյս է տեսնում և Ամերիկա-
յում և եւրոպական մի քանի երկրներում:
Վերջին տարիներում Տոլստոյն իր գեղարուես-
տական գրութեան մեջ անփոփոխ հետևում է
մի ուղղութեան—բայց անել ժամանակակից
մարդկութեան մէջ թաքնված սարսափելի խո-
ցերը, նկարագրել նրանց մի անողորմ բէալի-
քով: Այդ ուղղութեամբ արդէն մի քանի գրե-
վածքներ են լոյս տեսել, որոնք ցոյցով տալու-
թիւն են թողնում: Յարութիւնը վեպի բո-
վանդակութիւնն էլ այժմ իսկ յայտնի է, որով-
հետեւ ձեռագիրը արդէն տարածված է արտա-
սահմանում: Նրա մէջ հեղինակը պատմում է
թէ ինչպէս է յարութիւնը առնում ընտրողական
ընկած կինը: Անկուծը նկարագրված է այդպիսի
սարսափելի գոյններով, բարոյական ցեղը լոյս է
հանված այդպիսի հանձնարել վարպետութեամբ,
որ ինչպէս հաղորդում է «Новый Мир» հանդէ-
սը, անհնարին է ամբողջապէս տպագրել այդ
նկարագրութիւնները: Մարդը ունի շատ վեր-
քեր, բայց չէ սիրում նրանց ուսումնասիրել,
բժշկին ցոյց տալ: Հետաքրքրական է, որ քրան-
սական յայտնի կրթիկուս Բրիւնտիեր հրա-
ժարվել տպագրել «Յարութիւնը» իր «Revue

des Deux Mondes» լրագրում. Բրիւնտիեր ա-
սաց, որ նոր վեպը գլուխ դրածոց է, միանգա-
սայն արժանի մեծ հեղինակի անունին, բայց
ինքը չէ կարող այդպիսի բովանդակութեամբ
վեպ տպել իր լրագրում: Կարծես Ձօլան պա-
կաս բարոյական հրէշաւոր ապականութիւններ
է մինչև այժմ լոյս հանել, մանաւանդ իր «Պա-
րիզ» անունով երեւելի վեպի մէջ, և կարծես
Ձօլան պակաս հռչակված է իր այդ տեսակ
նկարագրութիւններով: Եւ մինչդեռ ամբողջ աշ-
խարհը այսպէս խօսում, վիճում է հանձնարել
վիպագրողի մասին, որքան ողորմելի են ուսու-
թանական զրգարողութիւններ և մեղադրանքներ
բարդել հեղինակի վրա: Այդ խաւարածութիւն
մէջը, «СВЕТ» լրագիրը, շտապեց իսկոյն և եթ
յայտարարել:

Վեպը, որքան այդ կարելի է իմանալ հէնց
առաջին գլխից, պիտի ծառայէ այն գաղա-
փարների տարածման, որոնց կոմս Լեօ Տոլս-
տոյ վերջին տարիներում եռանդով քարո-
ղում էր իր հրապարակախօսական յօդուած-
ներում, գործելով կամ պետական հիմնարկու-
թիւնների կամ կրօնական հիմնարկութիւննե-
րի դէմ:

Ռուս խաւարածի պահպանողականների
պատկերը հազիւ թէ սրանից աւելի պարզ և
չօշափելի կերպով նկարագրած լինէր երբ և իցէ:

Անցեալ յունվարին լրացաւ եօթնամսուն տա-
րի այն օրից, երբ ուսու հռչակաւոր գրող Գրի-
բօեզով սպանվեց Թէհրանում, ուր նա ուսաց
գետական պաշտօն ունէր: Այդ առիթով Կիւրի
«Россія и Азія» շաբաթաթերթը մի համեմատու-
թիւն է դնում այն ժամանակվայ և այժմեան
Պարսկաստանի մէջ: Ինչպէս յայտնի է, Պարս-
կաստանը դեռ VII դարում զրկվեց իր ազգա-
յին անկախութիւնից. վերջին սասանեան թա-
գաւորը, որ ընկաւ իսլամի սրբերի տակ, տարաւ
իր հետ և բուն պարսկական ազգային իշխանու-
թիւնը: Եւ այնուհետեւ մինչև այժմ Պարսկաս-
տանին տիրում են թիւրք ցեղերը: Ճիշդ է,
XVI դարում սեֆեւիդների հարստութիւնը մօ-
տեցաւ բուն պարսկական ազգայնութեան, պե-
տական կրօնը դարձնելով չիւա իսլամութիւնը,
բայց դա չէր կարող ոչնչացնել այն հանգաման-
քը, որ թէ սեֆեւիդները և թէ նրանց յաջորդած
և այժմ թագաւորող զաւթարեան տոհմը ծագու-
ած թիւրք են: Միայն անցեալ դարի վերջերում
մի բուն պարսիկ, Ջէհան-Քէրիմ խանը, կարո-
ղեցաւ նստել արքունի գահի վրա և յայտնի
դարձաւ իբրեւ հեղ և արդարադատ կառավարի:
Սակայն Աստուրաղի թիւրքերը, Աղա-Մու-

րում: Նա դեռ չէ հասնել ծնվելու համար, բայց
պրօցեսը արագացել է գիտակցական կեանքի
չնորհիւ, և Եւրոպան արդէն զգում է երկունքի
մօտ լինելը...

Երկրորդ մասի բովանդակութիւնը կազ-
մում է Անգլիան 1898 թ.ին: Հեղինակը եր-
կար կանոց առնելով Փաշտոյի հարցի վրա,
ցոյց է տալիս այն պատերազմի վտանգը, որ
կանգնած էր Անգլիայի և Ֆրանսիայի մէջ, չնոր-
հիւ սխալ հասկացողութեան և ուղղութեան, որ
աշխատում էին տալ խնդրին երկու ազգերի
մասովի որոշ մասը և պետական գործիչներից
շատերը... Հասարակական կարծիքի ծանրու-
թիւնը արդէն թեքվում էր պատերազմի կողմը,
երբ ժամանակին վրա հասած ուսաց արտաքին
գործերի մինիստրի այցելութիւնը համոզեց Ֆրե-
րանսիային զիջանել,— և հարցը խաղաղ ելը
ստացաւ... Ապա երկու գլուխ նուիրված է Ձի-
նաստանի նաւահանգիստների խնդրին, որ վեր-
ջին ժամանակները այնքան զբաղեցնում է մի
քանի մեծ պետութիւններին, և սպանո-ամերի-
կական պատերազմին: Կուրայի ապստամբու-
թեան առթիւ: Այս դէպքում նա փոքր ինչ կանոց
է առնում տղեղ և անարժան դերի վրա, որ
երբեմն խաղում է մամուլը, այսինքն նրա մի
մասը, զրգուելով հասարակական նեղ պատուա-
սիրութիւնը, փոխանակ միջազգային եղբայրու-
թեան դադափարին ծառայելու...
Երկրորդ մասին հեղինակը անցնում է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

The United States of Europe on the Eve of the
Parliament of Peace. By W. T. Stead. London
1899.

Եւրոպական Միացեալ Նահանգները խաղաղութեան
պարլամենտի նախընտաք օրը. Զեդլից, Վ. Մոնդել:

Ով որ փոքր է շատէ հետաքրքրվում է քաղա-
քական խնդիրներով, անշուշտ գիտէ, որ ան-
ցեալ 1898 թ. երկրորդ կիսում՝ սպանո-ամե-
րիկական պատերազմի օրոտների և չինական
նաւահանգիստների առիթով եղած վեճերի հետ
միաժամանակ՝ Եւրոպայում սկսեցին լսվել բո-
լորովին ուրիշ, կարծես այլ աշխարհից երևան
եկած ձայներ, որոնք առաջ եկան օգոստոսի
12-ին ուսաց Կայսրի արձակած Բարձրագոյն
հրաւերից յետոյ:


Ձանաղան խաղաղարարական ընկերութիւննե-
րի և իդէալիստ քարոզիչների փայփայած մրտ-
քերը կարծես աւելի մօտենում էին իրականա-
նալուն այն օրից, երբ ամենամեծ գիտաւորական
պետութեան ներկայացուցիչը բարձրացնում է
իր հզօր ձայնը ընդհանուր պաշտօնական
մասին: Առաջ է դալիս մեծ զինատեսիլ, որի

նախաձեռնողը և ոգի տուողը լինում է յայտնի
անգլիացի հրապարակախօս, «Review of Re-
views» ամսագրի հրատարակիչ Վ. Մոնդել: Իրա-
յնորհիւ նախ տեղեկում է Լոնդոնում մի կոմի-
տետ, որի նպատակը դառնում է կազմակերպել
«Միջազգային խաչակիր արշաւանք խաղաղու-
թեան» (International Crusade of Peace): Այդ
կոմիտէի քանդերի չնորհիւ, Անգլիայի բազմա-
թիւ քաղաքներում կայացնում են միտինգներ և
ընդունում են որոշումներ, որպէս զի կառավա-
րութեան ուղղորդութիւնը զբաւեն և ստիպեն
նրան նպատակը Ռուսաց Կայսրի առաջարկու-
թեանը: Եարժուքը հետզհետէ տարածվում է ու-
րիշ երկրներ և համարեաւ բոլոր տեղերի հա-
սարակական կարծիքը այս կամ այն ձևով ար-
տայայտում է ջերմ համակրութիւն Եւրոպայի
ընդհանուր զինաթափութեան գաղափարին:
Բայց Վ. Մոնդել չէ բաւականանում որանով.
Նա կամենում է անձամբ այցելել բոլոր եւրո-
պական մայրաքաղաքները և ծանօթանալ այն
երկրների հասարակական կարծիքի և ղեկավա-
րող պետական անձանց հայեացքների հետ, ո-
րոնց վիճակված է դեր խաղալ առաջիկայ մի-
ջազգային խաղաղութեան կօնֆերենցիայի մի-
ջոցին: Սեպտեմբերի 3-ին թողնելով Լոնդոնը,
նա այցելում է Բրիւսսել, յետոյ Պարիզ, Բեռլին,
Ս. Պետերբուրգ, Վոսկովա, Սեվաստոպոլ, Սալ-
տա, Լիվադիա. այդտեղից վերադառնում է Պոլ-
սի վրայով, անցնում է Սօֆիա, Բեղքադ, Բու-

ԲԻՐԼԻՆ: Կառավարությունը տեղիկայ
Անգլիային և Միացեալ-Նահանգներին, որ
ուսանց Գերմանիայի համաձայնութեան Տանտ
Երկարոր նշանակելը նա սամական դաշնա
Երկարութեան է համարում:

Համար, երէկ դուրս եկան Պէկինից:

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԿԱՆ—11—12 ժ. վերաբ.
ժողովեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ.



Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелие. ул. № 13.